ՁԵՌԱՁ ՏԵՍՐԱՊ

ՀԱՅ
ՍՐԲԱԶԱՆ ԵՒ ԳԵՂՁՈՒԿ
ՀԱՄԵՐԳԻ

Խմբագրեց՝ հաւատաց ներածութեամբ

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ
ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ
1911

ՄԱՏԵՆԱՐԱՆ
ԳՐԻԳՈՐ Գ. ՀՈՎՀԱՆՆԻ
ԱՅՆՏԵՂ - ՀԱՅԿ - ԳՅՈՒՂ
ԳԱՅ 9. ԹԻՒ 17

ՅԵՌԱՑ ՏԵՏՐԱՆ

ՀԱՅ

ՍՐԲԱԶԱՆ ԵՒ ԳԵՂՋՈՒԿ

ՀԱՄԵՐԳԻ

Խմբագրեց՝ համառօտ հերաւծութեամբ

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ
ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ
1911



ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Հայ գեղջուկը բնազդաբար բաժնած է իր երգական երաժշտութիւնը երեք տեսակի՝

Ա. ԲԱՌ ԱՍԵԼ,

Բ. ԽԱՂ ԱՍԵԼ եւ

Գ. ԽԱՂ ԿԱՆՉԵԼ:

Ա. ԲԱՌ ԱՍԵԼ կը նշանակէ բառ առ բառ ասել՝ հատիկ հատիկ հնչել՝ եղանակաւոր պատմել. համազօր հնոց *վէպ ասել* իմաստին: Ցիրաւի, այս կարգի երաժշտական գրականութեան նիւթն է, բացառապէս, հին եւ նոր ժողովրդական անգիր պիպասանութիւնը: Որովհետեւ վէպերը կը պատմուին գեղջուկի հանգստեան օրերուն՝ ձմեռուան երկար գիշերներուն եւ խրճիթի մէջ նստած, ուստի *նստամանց* եւս կոչեն: *Նստամանց* վէպերը *բառ ասելու* պահուն ունի դիրներն, առ հասարակ, բոլորովին խորհրդաւոր լռութիւն կը պահեն, ջերմեռանդ հաւատացեալի տեսքը կառնեն եւ ակնապիտ կ'ունկնդրեն գեղջուկ գուսանի հնչուն բերանով խօսող անցեալն ու ներկան:

Այս ձեւը կը պարունակէ հայ գեղջուկ երաժշտութեան տարերքը՝ բառերի հնչական եւ էական՝ *հիմնաձայն, շեշտ եւ դուք*, եւ տաղաչափութեան հիմունքները՝ վանկերի ամանակը՝ *սուղ* եւ *երկար*: *Բառ ասելու* եղանակը անկայուն է, իսկ ամանակը՝ հաստատուն:

Բ. ԽԱՂ ԱՍԵԼ կը նշանակէ՝ խաղաւոր, ոճաւոր, նոխ ասել՝ երգել. *բառ ասելու* եղանակաւորումն է: Այս ոճով կ'երգուին զրեթէ բոլոր տեսակ գեղջուկ երգերը եւ մեներգի բնոյթ չունեցող վիպերգերը: *Խաղ ասելու* ձայնաշարն ու տաղաչափութիւնն հարուստ է:

Գ. ԽԱՂ ԿԱՆՉԵԼ կը նշանակէ՝ խաղաւոր, ոճաւոր, նոխ կանչել՝ բարձրաձայն ու զարդարուն գեղգեղելով երգել: *Խաղ կանչելը խաղ ասելուն* ընդարձակ ձեւն է: Այս ոճով կ'երգուին, ըստ մեծի մասին մեներգները, որոնց ձայնելեւէջները առաւել ընդարձակ սահման ու պտոյտներ ունին, որպէս դիցազներգութիւնները, վիպերգութիւնները, անուշիները, ողբերը, եւայլն:

Հայ եղանակները ունին նոխ, ինքնատիպ տրոհումներ եւ շեշտաւորումներ, որոնք, չափածոյ լինելով հանդերձ, ազատ ու անկախ են, հակառակ արեւմտեան երաժշտութեան, ուր յանգը ու շեշտը փոխադարձաբար կաշկանդուած են: Հայկական երաժշտական յանգն ու շեշտը միասին կը կենդանացնեն մի այնպիսի ձայնա-

կան տեսարան, ուր առաջինը կը գծագրէ հոգու ուրախ յուզումներու տեւողութիւնները՝ համաչափ ու յանգաւոր տրոհումներով. իսկ երկրորդը կը նկարէ՝ թափն ու եռանդը՝ բազմատեսակ ու պերճ ձայնեւանգներով:

Հայ գեղջուկ երգերն ունին այսպիսի շէնք.

ա. ԲՈՒՆ ԵՐԳ, *որ կրկնակ չունի.*

բ. ԲՈՒՆ ԵՐԳ *եւ կրկնակ՝ փոխ առ փոխ* երգելի.

գ. ԲՈՒՆ ԵՐԳ *եւ կրկնակ՝ տող առ տող ու փոխ առ փոխ* երգելի եւ

դ. ԵՐԿՈՒ ՋԱՆԱՋԱՆ ԵՐԳԵՐ, որոնք հարց ու պատասխան են, կամ որ եւ է ներքին նանգամանքով են կապուած, *առաջին, երկրորդ եւ երրորդ ձեւերով փոխադարձաբար հիւսուելով* երգելի:

Բուն երգը կ'ընդգրկէ եղանակի վիպականը. իսկ կրկնակը՝ ճարտարականը, որ զեղջուկ երաժշտութեան ոգին է. ուստի բուն երգի եղանակն անոնք է, անպանոյն ու պարզ է՝ նման խօսելուն. իսկ կրկնակինը՝ ոճաւոր, զարդարուն եւ շարժուն:

Բուն երգի բանաստեղծութիւնը համեմուած է պատկերաւոր համեմատութիւններով, իսկ կրկնակինը՝ զոյնզգոյն բացագանչութիւններով կամ կարճ ու կտրուկ նկարագրութիւններով: Առաջինը կը բացատրէ միտքը, երկրորդը կը բարգմանէ զգացումները:

Գեղջուկը բնութեան հարազատ զաւակն է. ուստի հաւակել է բնութիւնը բոլանդակ հոգւով ու սրտով: Իր երգերու մէջ բնութիւնը կը խօսէ. որովհետեւ բնութիւնն է նախ իր մէջ խօսած: Իր սրտի մէջ բնութեան ծովը կը յուզուի, վասն զի ինքն իսկ բնութեան ալիքներու տակ կը դեգերէ: Իր երգերն իր կեանքն են, զի իր ամբողջ կեանքը իր երգերու մէջն է ներշնչած: Վերջապէս, գեղջուկ երգերը տեսակ տեսակ ասուն հայելիներ են, որոնք զատ զատ, իրենց ծնունդ առած վայրերուն դիրքը, կլիման, բնութիւնը եւ կեանքը կանդրադարձնեն:

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

ԾԱՆՕԹ. Տեսակիս գեղջուկ երգերու մեծ մասն առնուած է Կոմիտաս Վարդապետի եւ Մանուկ Աբեղեանի խմբագրած ժողովրդական «Հազար ու մի խաղ» երգարաններու Ա. եւ Բ. յիսնեակներէն: (Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, 1904 եւ 1905):

ՄԱՍՆ Ա.

ՍՐԲԱԶԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

1.

ՊԱՏԱՐԱԳ

Սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ, Տէ՛ր զօրութեանց
լի են երկինք եւ երկիր փառօք քո.
օրհնութիւն ի բարձունս.
Օրհնեալ որ եկիր եւ գալոցդ ես անուամբ տիրոջն.
ովսաննա ի բարձունս։

2.

ՈՂԲ ՏԻՐԱՄՕՐՆ

Տիրամայրըն հանդէպ որդւոյն
կայր ի խաչին.
Եւ լըսելով ըզծարաւին
Լայր ցաւագին.
Ի փուշ պսակըն գլխելով
Ողբ, կոծ վայ տայր իւր անձին։
«Աչա՛ցըս լոյս, ո՛ըդեակ, Յիսուս,
Ես ընդ քեզ մեռանիմ»։

3. Ա.

ՋՐՕՐՇՆԵԱՑ ԵՐԳԵՐ

Ո՞վ զարմանալի խորհուրդ այս մեծ յայտնեալ,
Աբաբիչն Աստուած ի Յորդանան եկեալ։

Յորդանան լուեալ փախստական դառնայր,
Վտակ առ վտակ պտտամաւոր լինէր.

«Դե՛ա, մի՛ զարհուրիր, քո աբաբիչն եմ ես.
Եկեալ մկրտիմ եւ լուանամ զմեղս»։

3. Բ.

Այսօր ձայնն հայրական
Յերկնից ի՛ջ՝ալ հաճոյական՝
Սիրեցելոյ Որդւոյ վըկա՝յն։

«Ա՛յ յորդորէ,
Դեռ յորդորէ,
Դեռ Յորդանան»։

Յորդորական ձայնիւ երգէր
Մեծ Կարապետն Յովհաննէս։

4. Ա.

ՊԱՏԱՐԱԳԻ ԵՐԳԵՐ

Ամէն։ Հա՛յր սուրբ, Որդի՛ սուրբ,
Հոգի՛ սուրբ։ Օրհնութի՛ւն. Հօր եւ
Որդւոյ եւ սրբոյ Հոգւոյն. այժմ եւ
միշտ եւ յաւիտեանս յաւիտենից։ Ամէն։

4. Բ.

Տէ՛ր, ողորմեա՛, Տէ՛ր, ողորմեա՛,
Տէ՛ր, ողորմեա՛, Տէ՛ր, ողորմեա՛։

Սրբի՛, Աստուած հարցն մերոց,
Որ ապաւէնդ ես նեղելոց,
Հաս յօգնութիւն ծառայից քոց,
Լեր օգնական ազգիս Հայոց։

5.

ՏԱՂ ՅԱՐՈՒԹԵԱՆ

Հաւիկ մի պայծառ տեսի՝ անմահ,
Աննմանիդ ո՞վ նման.դո՛ւ նման՝ աննման։
Յայն քառաթեւին վերայ՝ անմահ,
Աննմանիդ ո՞վ նման.դո՛ւ նման՝ աննման։

6.

ՇԱՐԱԿԱՆ ՈՏՆԱԼՈՒԱՅԻ

Այսօր կանգնեցաւ
Աւազան մկրտութեան՝
Ի թողութիւն մեղաց մերոց։
Այսօր Տէրն մեր լուանայր
Զոտս աշակերտացն,
Եւ պատուիրէր զայս ասելով.
«Մի ոմն ի ձէնջ, եղբարք,
Մատնելոց է զիս ի մահ,
Եւ որոշի յաշակերտացդ»։
Զոյն լուեալ Պետրոսի՝
Ակնարկէր առ Յովհաննէս.
Հարցանել, թէ ո՞վ իցէ։

Բանն, զոր ասաց Յիսուս,
Տրամեցոյց զիւր զաշակերտսն.
Եւ խռովեցան ամենեքեան։

7.

ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ

Հա՛յր մեր, որ յերկինս ես,
սուրբ եղիցի անուն քո.
եկեսցէ արքայութիւն քո.
եղիցին կամք քո,
որպէս յերկինս եւ յերկրի.
զհաց մեզ հանապազորդ
տուր մեզ այսօր.
եւ թող մեզ զպարտիս մեր,
որպէս եւ մեք թողումք
մերոց պարտապանաց.
եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն,
այլ փրկեա՛ ի չարէ։

ՄԱՍ Բ.

ԳԵՂՋՈՒԿ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Ի.

ԿԱԼԵՐԳ

Հո՛, ռո՛լ, օ՛, լո՛, լո՛, լո՛, լո՛։
Ա՛լի, ա՛լի, քե՛ մատաղ.
Հո՛, ե՛զը, ջա՛ն,
Հո՛, ռո՛ւեալ, հո՛.
Հո՛, ռո՛ւեալ, հո՛։

Հա՛, կա՛լ ատա, մա՛ն ատա.
Հո՛, ե՛զը, ջա՛ն,
Հո՛, ռո՛ւեալ, հո՛.
Հո՛, ռո՛ւեալ, հո՛։

Հա՛, կալը գարման ատա.
Հո՛, ե՛զը, ջա՛ն,
Հո՛, ռո՛ւեալ, հո՛,
Հո՛. ռո՛ւեալ, հո՛։

Ցորենն ինձ, գարմանը քեզ.
Հո՛, ե՛զը, ջա՛ն,
Հո՛, ռո՛ւեալ, հո՛,
Հո՛, ռո՛ւեալ, հո՛։

Հայտանը գարման ատա,
Հայտանը գարման ատա.
Պռէ՛ռէ, հո՛մ, պռէ՛,
Պռէ՛ռէ, հո՛մ, պռէ՛,
Պռէ՛ռէ, ջա՛ն։

ՍԱՅԼԵՐԳ ՂԱԶԱԽ ԳԱՒԱՌԻ

Հո՛լ ատա, գո՛մէշ, ջա՛ն,
Հո՛լ ատա, գո՛մէշ, ջա՛ն,
Հո՛լ ատա, գո՛մէշ, ջա՛ն, հո՛.

Հո՛լ ել, հո՛լ ել, հո՛լ ել, հո՛լ ե՛լ.
Հ՛օ, ջա՛ն, հո՛։

Թո՛լ ատա, գո՛մէշ, ջա՛ն,
Թո՛լ ատա, գո՛մէշ, ջա՛ն,
Թո՛լ ատա, գո՛մէշ, ջա՛ն, հո՛.

Հո՛լ ել, հո՛լ ել, հո՛լ ել, հո՛լ ե՛լ.
Հո՛, ջա՛ն, հո՛։

ՍԱՅԼԵՐԳ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ

Հո՛լ արա, և՛զօ՛,
Ձա՛ն, ա՛ղբեր, ցա՛ն, հո՛.
Թո՛լ արա, և՛զօ՛,
Ձա՛ն, ա՛ղբեր.

Դե՛, սի՛ռուն, ե՛լ, ե՛լ, ե՛լ, ե՛լ,
Դե՛, ծի՛ռան, ե՛լ, ե՛լ, ե՛լ, ե՛լ,
Դե՛, տո՛կան, ե՛լ, ե՛լ, ե՛լ, ե՛լ, հո՛։

Հո՛լ արա ակը,
Ձա՛ն, ա՛ղբեր, ցա՛ն, հո՛.
Թո՛լ արա ակը,
Ձա՛ն, ա՛ղբեր.

Դե՛, սի՛ռուն, ե՛լ, ե՛լ, ե՛լ, ե՛լ,
Դե՛, ծի՛ռան, ե՛լ, ե՛լ, ե՛լ, ե՛լ,
Դե՛, տո՛կան, ե՛լ, ե՛լ, ե՛լ, ե՛լ, հո՛։

2.

ՄՈԿԱՑ ՄԻՐԶԱ.

ԴԻՒՑԱԶՆԵՐԳ

Օրն էր ուրբաթ,
Լուս ի շաբաթ,
Դեռչա էրիր ենք Մալաքեուէն.
Թըղթիկ մեկաւ Զըզիրու քաղքէն,
Ասին, բերին Մալաքեուէն,
Տուին ի ձեռ Մոկաց Միրզէն,
Հազա՛ր ափսոս Մոկաց Միրզէն։

Ասեց, կարդաց քաղցրիկ լեզուէն,
Էրես մաղդէն,
Շրլեց աչքէր, կախեց չանդէն,
Գողաւ գոյն կամիր երեսէն։
Հազա՛ր ափսոս Մոկաց Միրզէն։

Կանչեց, ասաց իւր մըշակին,—
Դո՛ւս քաշի բոզ–բեդաւին,
Վրրաց գըրէք թամքը սաղաֆին,
Սաֆսր կերթամ չուր Զըզիրէն։
Հազա՛ր ափսոս Մոկաց Միրզէն։ Եւն.

3. Ա.

ԹԵՒ ՊԱՐ

Սարը սարի նման չէ,

Հո՛յ, oro՛r, ադիցo,

Փարը քարի նման չէ.

Հո՛յ, oro՛r, ադիցo,

Հարսն ու աղջիկ շատ ունայ,

Հո՛յ, oro՛r ադիցo,

Մէկն իմ եարին նման չէ։

Հո՛յ, oro՛r, ադիցo։

3. Բ.

ԹԸՌՆՈՑԻ ՊԱՐ

Սո՛նա եա՛r, Սո՛նա եա՛r,

Սո՛նա սիրուն, Սո՛նա եա՛r։

Վարդավառը գալիս ա,

Սո՛նա եա՛r, Սո՛նա եա՛r.

Ծաղիկը ցընծալիս ա.

Սո՛նա սիրուն, Սո՛նա եա՛r,

Ամ դիւրում կանչող աղջիկ,

Սո՛նա եա՛r, Սո՛նա եա՛r,

Զինքդ ծըվըալիս ա։

Սո՛նա սիրուն, Սո՛նա եա՛r։

4.

ՀՈՎՈՒԵՐԳ

Քելէբ, ցոլէբ՝ իմ եարը,
Աբեւի տակին
Քելէբ, ցոլէբ՝ իմ եարը.
Սարի սովոր,
Մեն մենաւոր,
Շէ՛կ տըղայ,
Շո՛ղ արեգակ,
Թո՛ղ արեգակ,
Ե՛կ, տըղայ։

Քելէբ, ցոլէբ՝ իմ եարը,
Աղբիւրի ակին
Քելէբ, ցոլէբ՝ իմ եարը.
Կանաչ առուով,
Ծոնաչ առուով,
Ե՛կ, տըղայ,
Բաղումն արի,
Շաղումն արի,
Շէ՛կ տըղայ։

Քելէբ, ցոլէբ՝ իմ եարը,
Գեղանդին ուսին
Քելէբ, ցոլէբ՝ իմ եարը.
Հունձ ես արել,
Քրտինք դառել,
Շէ՛կ տըղայ,
Հով ծառի տակ,
Զով ծառի տակ,
Ե՛կ, տըղայ։

Քելէբ, ցոլէբ՝ իմ եարը,
Զա՛ն աչքի լուսին,
Քելէբ, ցոլէբ՝ իմ եարը.
Հով է, քընի՛ր,
Զով է, քընիր,
Ե՛կ, տըղայ,
Հունձ ես արել,
Շատ բեզարել,
Շէ՛կ տըղայ։

5. Ա.

ԾԱՂՐԵՐԴ ԱՂՔԱՏՈՒԹԵԱՆ

ԿԱԹ ԿԹԵԼՈՒ ԵՐԳ

Հինգ էծ ուներմ ուր էծէրով,
Իլիլի, տիլիլի.

Կաթ կը կըթեմ պըղընձներով,
Իլիլի, տիլիլի.

Սեր կը չափեմ կալի չափով,
Իլիլի, տիլիլի.

Եղ կը հանեմ լըւի աբկով։
Իլիլի, տիլիլի։

5. Բ.

ՊԱՐԵՐԳ ԹԸՌՆՈՑԻ

Զա՛ր՝ զը՛նլը, զա՛ր զը՛նլը, բո՛ղ զընգա-
Պարենք գիշեր լուսընկայ։ լը, բո՛ղ

Էս գիշեր՝ լուսնակ գիշեր,
Զա՛ր՝ զը՛նլը, զա՛ր զը՛նլը, բո՛ղ զընգա-

Զիւռն ելեր՝ զեռչն հաչեր։
Պարենք գիշեր լուսընկայ։

Էլի պարը բուլորաւ,
Ներսը միջին մուլորաւ։

6

ԿԱԼՈՒԱԾՈՑ ԳՐԱՒՄԱՆ ԵՐԳ

Միրանի ծառ, բա՛ր մի տա,
Ճըղնեերդ իրա՛ր մի տա.
Քանի ձեր մէջ մոն գամ ես,
Ցաւերըս իրա՛ր մի տա։
Հա՛, տուէք, յե՛տ տուէք, սարեր
հովն ընկաւ,
Սըրտիս խնդուում ծովն ընկաւ.
Գնա՛, էլ յետ չըգայ էս տարուան
տարին,
Սեւ դարտն իմ վըզովն ընկաւ։
Հո՛վ, հո՛վ, հովն ընկաւ,
Սըրտիս խնդուում ծովն ընկաւ։

Մեռայ բազում բանելէն,
Մի կողմէն ջուր անելէն.
Ծառերին թուի չը մընաց,
Դարտիս դարմանն տանելէն։

Ընատած տեղիս քար չունիմ,
Էրուած սըրտիս ճար չունիմ.
Ա՛յ, անօրէն փուչ աշխարհ,
Բաղ ունիմ ու բար չունիմ։

7. Ա.

ԳԵՂՋԿԱԿԱՆ ՍԻՐԵՐԳ

Կուժն տուայ, ելայ սարը,
Զը գըտայ Ֆիդանն ետրը,
Ֆիդանն ետրը ինձ տըէք,
Զը քաշեմ ահ ու զարը։

Մեծ սարի հովին մեռնեմ,
Շէկ տըղի բոյին մեռնեմ.
Մի տարի ա չե՛մ տեսել,—
Տեսնողի աչքին մեռնեմ։

Բլբուլը դարի վերայ,
Խնձորը սարի վերայ.
Սիրած սիրածի տային,
Զոր գետնին՝ քարի վերայ։

7. Բ.

ԳԵՂՋԿԱԿԱՆ ՍԻՐԵՐԳ

Սարէն եկաւ երկու մուխ,
Բոյիդ մեռնիմ,

Մինը հանդ ա, մինը ծուխ,
Սոյիդ մեռնիմ.

Երկու սիրուն երեւաց,
Բոյիդ մեռնիմ,

Մինը չէկ ա, մինը թուխ։
Սոյիդ մեռնիմ։

Իմ եարն է շատ խորոտիկ,
Աչքերը նռան հատիկ.
Ատուած սիրէք, աղբերտիք,
Ինձ տարէք եարիս մօտիկ։

7. Գ.

ԳԵՂՋԿԱԿԱՆ ՍԻՐԵՐԳ

Գընա՛, գընա՛, հետիդ եմ,
Հա՛, հա՛, հա՛. հա՛, հա՛, հա՛, հա՛.
Սարիցիս, եա՛ր ջան,
Եարիցիս, եա՛ր ջան,

Կարմիր խնձոր գօտիդ եմ,
Հա՛, եարիցիս. եար ջան,
Սարիցիս եա՛ր ջան։

Դու խնձ էս տեղ չես թողնի,
Որ տեղ երթաս մօտիդ եմ։

Ապարանը քարոտ ա,
Սիրուն կանաչ արօտ ա.
Ուղիղ եօթը տարի ա,
Քոյրն աղբօրը կարօտ ա։

ՄԱՍ Գ.

(Շարունակութիւն)

Ի. Ա.

ՔԱՂՀԱՆԵՐԳ

Քաղհան կանեմ հօ՛ բարով,
Եար, Ցայ, Ցայ, Ցայ, Ցայ, Ցայ,

Տոլմա կփթեմ բիբարով,
Սոցա եարբմ, Ցայ, Ցայ.

Աչեանն անի լաւ օրեր,
Եար, Ցայ, Ցայ, Ցայ, Ցայ, Ցայ,

Բամբակ քաղեմ նուբարով։
Սոցա, եարբմ, Ցայ, Ցայ։

8. Բ.

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՊԱՐԵՐԳ

(Ծաղրերգ)

Խումար պառկի երեսքաց,
Հո՛պ, հո՛պ, հոպպըտա՛, դրմբա՛.
Դեղին կարպետ, բըմբուլ բարձ։
Հո՛պ, հո՛պ, հոպպըտա՛, դրմբա՛,
Հէ՛յ, հէ՛յ, լա՛ւն է. հէ՛յ, հէ՛յ, լա՛ւն է,
Հէ՛յ, հէ՛յ, լա՛ւն է. հէ՛յ, հէ՛յ, լա՛ւն է։
Ինուշ ջրնէ երես բաց,
Սահակն եկաւ խելք գըշաց։
Հաջոնց կալը բոլորպար,
Խումար մէջը կը խաղար։
Ծամիր թալուկ իւր յետեւ,
Կը թրռվրքէր շատ թերթեւ։
«Հասատա՛ս մընայ մեր հաջին,
Որ պահէ մէր նոր փեսին»։
Պարնան բացուաւ նոր լալա,
Խումար բերաւ ջուխտ բալա։
Աչքերդ լոյս, հաջի աղա,
Թոռներուդ հալաւ արա։

9.

ՊԱՆԴԻԽՏԻ ԵՐԳ

Կառ՛նկ, ուստի՞ կուգաս, ծառայ եմ ձայնիդ,
Կառ՛նկ, մեր աշխարհէն խաբբիկ մը չունիս։

Թողեր եմ ու. եկեր մըլքերս ու այգիս,
Բանի որ ա՛խ կանեմ, կու քաղուի հոգիս։

Դարիբի սիրտն է խոց, ջիկեարն է վարամ,
Կերած հացն է լեղի ու ջուրն է հարամ։

Ինձ պտտասխան չառիր, եկար, գնացիր
Կառ՛նկ, մեր աշխարհէն գնա, հեռացիր։

10.

ՀԱՐՍՆՈՒԿԻ ԵՐԳ

Արևս թրռվրով եկաւ,
Իմ չինարի եարը.
Մեր բոնը կռուով եկաւ,
Դարդիսան եարը.
Թըշնամու որդին մեռնի,
Իմ չինարի եարը,
Իրա չար սըրտովն եկաւ։
Դարդիսան եարը։

Ծրտպը վառ ա, վառ ա,
Հոր հետ վատամարդ գառայ.
Մէր ու աղբէր թող առի,
Ես իմ սիրտն գառայ։

Գարտիի ծէրին կանչի,
Թող թշնամին ամաչի.
Արևուդ մեռնիմ, եա՛ր ջան,
Զինարի պէս կանանչի։

11.

ՕՏԱՐՈՒԹԵԱՆ ԵՐԳ

Կանչէ՛ կռունկ, կանչէ՛, քանի գարուն է
Ղարիբներու սիրտը գունդ գունդ արունէ.

Կռո՛ւնկ ջան, կռո՛ւնկ ջան, գարուն է,
Կռո՛ւնկ ջան, կռո՛ւնկ ջան, գարուն է.
Ա՛խ, սիրտս արուն է։

Կանչէ՛, կռո՛ւնկ, կանչէ՛, քանի արօտ է.
Աշխարհն է արեգակ, սիրտս կարօտ է.

Կռո՛ւնկ ջան, կռո՛ւնկ ջան, արոս է,
Կռո՛ւնկ ջան, կռո՛ւնկ ջան, արոս է.
Ա՛խ, սիրտս կարոս է։

Կանչէ՛, կռո՛ւնկ, կանչէ՛, քանի արեւ է.
Աշնան կերթաս երկիր, եարս բարեւէ.

Կռո՛ւնկ ջան, կռո՛ւնկ ջան, արեւ է,
Կռո՛ւնկ ջան, կռո՛ւնկ ջան, արեւ է,
Ա՛խ, եարիս բարեւ։

12.

ԲԱՐԵԿԵՆԴԱՆԻ ԵՐԳ

Նկէ՛ք, տեսէ՛ք, ի՞նչն է կերբի զինչ.
Նկէ՛ք, տեսէ՛ք, էծն է կերբի զթուփ,
Էծ վրբ թըփին,
Թուփ վրբ էգուն,
Էգ պարագուն, պարագուն.
Ի՞նչ խէր ու բարի մ՚էր եկաւ,
Էս տարուանս տարուն։

Նկ՛էք, տեսէ՛ք, ի՞նչն է կերբի զէծն.
Նկէ՛ք, տեսէ՛ք, գէլն է կերբի զէծն.
Գէլ վրբ էծուն,
Էծ վրբ թըփին, (քաս վերևոյն)։

Նկէ՛ք, տեսէ՛ք, ի՞նչն է կերբի զգէլն.
Նկէ՛ք, տեսէ՛ք, խոզն է կերբի զգէլն.
Խոզ վրբ գէլուն,
Գէլ վրբ էծուն,
Էծ վրբ թըփին, (քաս վերևոյն)։
Եւ այլն։

12. Բ.

ԹԵԻ ՊԱՐ

Շորորա, անուշ, ջա՛ն, շորորա։
Անուշի շորորով ես կորայ։
Վարդ եմ քաղել շաղերով,
Շորորա, անուշ, ջա՛ն, շորորա։
Վեր եմ դրել մաղերով.
Անուշի շորորով ես կորայ։
Մի ջուխտ չամամ եմ կոթցրել.
Շորորա, անուշ, ջա՛ն, շորորա։
Իրա կանաչ թաղերով։
Անուշի շորորով ես կորայ։

12. Գ.

ՓԱԹՊԱՐ

Հո՛վ, հո՛վ, հո՛վ լինի
Եարիս տունը ծո՛վ լինի.
Թո՛ղ, թո՛ղ, թո՛ղ լինի,
Եարդս համարով լինի։
Դե՛ զանեք, զանեք, հողը հանեք,
Մեր բենամու դողը հանեք։

Մողիկ ես ծաղկանց միջին,
Հո՛վ, հո՛վ, հո՛վ լինի,
Մի հատ ես աղջկանց միջին.
Եարիս տունը ծո՛վ լինի.
Ե՛տ ինձ պարզեցեք ալա,
Թո՛ղ, թո՛ղ, թո՛ղ լինի,
Իմ ընկերը մարդկանց միջին։
Եարդս համարով լինի։
Դե՛ զանեք, զանեք, հողը հանեք,
Մեր բենամու դողը հանեք։

Արի մի փոթպար խաղանք,
Տընկող մընանք չը կողանք.
Հարսանիքիդ ալիւրը
Մուղնու ուխտից վաղ անցանք։
Իրար հետ բաղը գնանք,
Ուտենք, խմենք, լիանանք,
Թըշնամու աչքը հանենք,
Մեր Սատրծուց զոհանանք։

13.

ԳՈՒԹԱՆԵՐԳ ԼՕՌՈՒԱՅ ԳԱՒԱՌԻ

Հօ՛։—

Օրհնեա՛լ է Աստուած,

Յիշեա՛լ է Աստուած,

Հօ՛, հո՛, հօ՛-ա՛, հո՛ հո՛ հո՛ հո՛ հո՛.

Գոհ՛ութ, գոհ հը, հո՛, հո՛յ, հօ՛- ա՛.

Ա՛ռ, հա՛ գոմեր, հո՛, հո՛յ հօ՛- ա՛.

Տա՛ր, հա՛ գոմեր, հո՛, հո՛յ, հօ՛։

Լուսը լուսացաւ,

Հա՛, հա՛,

Փա՛ռք քեզ, Տէ՛ր.

Բարին շտապացաւ։

Հէ՛, հէ՛, հէ՛, հէ՛, հո՛, հո՛յ.

Հօ՛- ա՛, հո՛, հո՛, հո՛, հո՛, հո՛։

Գոհ՛ութ, գոմեր, հո՛, հո՛յ, հօ՛- ա՛

Ա՛ռ, հա՛ գոմեր, հո՛, հո՛յ, հօ՛ – ա՛.

Տար՛, հա գոմեր, հո՛ հո՛յ հօ՛։

Ազօթքան բացուաւ,

Հա՛, հա՛,

Փա՛ռք քեզ, փա՛ռք.

Մեր ժամը լցուաւ։

Հէ՛, հէ՛, եւ այլն. *(ըստ վերոյի)։*

Գոհ՛ութ, ջա՛ն, հո՛, պրօ՛ւոյ, հո՛, պրի՛ւոյ.
ջան.

Հօ՛ւոյ, հօ՛ւոյ, քէ՛ դուրքան
Շի՛նալ ջան, հօ՛ւոյ, քէ՛ մեռնիմ.
Լա՛չին ջան, հօ՛ւոյ, հօ՛ւոյ, հօ՛ւոյ՝

Եկեղեցոյ քրնէ,

Հա՛, հա՛.

Վե՛ր կացէք, գուրա՛նուոր,

Գուրանը բանէ։

Հէ՛, հէ՛, եւայլն *(ըստ վերոյի)։*

Գոհ՛ութ, ջա՛ն, եւայլն *(ըստ վերոյի)։*

Գայթա, գայթա է,

Հա՛, հա՛.

Այ, ճրվիր՛ուս, ճրվիրուս,

Ակը լայթա է.

Հէ՛, հէ՛, եւայլն։ *(ըստ վերոյի)։*

Հօ՛յ, դուս ելաւ. հո՛ ա՛.

Հօ՛յ, դու՛ս ելաւ, հո՛, ա՛,

Հօ՛յ, դո՛ւս ելաւ, հո՛, ա՛.

Հոռո, հոռո, հոռո, հոռո, հոռո,
Հոռո, հոռո, հոռո, հոռո, հոռո, հոռո.
Հոռո, հոռո, հոռո, հոռո, հոռո,
Հոռո, հոռո, հոռո, հոռո, հոռո, հոռո.

Հո՛յ, ռա՛ւել ա, հո՛, ա՛,
Հո՛յ, ռա՛ւել ա, հո՛, ա՛,
Հո՛յ, ռա՛ւել ա, հո՛, ա՛,

Հոռո, հոռո, եւ այլն (ըստ վերոյի)։

Հո՛, դո՛ւս եկաւ, հո՛։

Օրհնեա՛լ է Աստուած,
Ցիշեա՛լ է Աստուած։
Մաճկալը մաճին,
Ա՛յ հորեւոր,
Օղերն ականջին։
Հօտաղն է լալի,
Քոի, ա՛յ լալիկ հօտաղ,
Միջակն է գալի։
Վարենք՝ շատանայ,
Տո՛կան ջան,
Տէրն ուրախանայ։
Թա՛փ տուր՝ թեւ ապա,
Ա՛յ խոփ ու ձեւիչ,
Շուռ տուր՝ սե՛ւ ապա։ եւայլն

14.

ՍԻՓԱՆԱՅ ՔԱՋԵՐ

Քայլերգ.

Լո՛, լո՛, լո՛։ Սէպ Սիփանայ ապրի վերան
Կարիճներ շատացով գալիս են միասնում.
Այնտեղ անուն օրէրք, անոյշով թարգը լերան,
Զէնք ու զրահի են ընթանում։

Ինչո՞ւ վառում են, զինւում,
Սանձակոծ ձի հեծնում անհամբեր,
Վառ արեւն է նոյա քաջ արտի մէջ հառում,

Թրաչում, անցնում են ամպերը,
Գոռ Սիփանայ պինդ քարերն,
Սլանում են դէպի ցած,
Դաշտի մէջ է թըշնամին,
Նա է վառում նոյա վրէժն անմոռաց։
Դաղանաբար վատթար թըշնամին,
Հատու սուսերը հանել,
Հայ իշխանին է ապանել,
Այս է վառում քաջերին։

Հայ արևաբն էլ ասի կանգնած՝
Այժմ թշնամուն մահու, մարտի
է կանչում,
Մեծ վրէժ արևան վրէժ է նա
պահանջում.
Եւ թշնամին պարտուած,
Թողնում փախչում ասէ ասր,
Յետ է ձգում մեծ աւար։

Արիւն թափեցին, փոխուեցակ արևան՝
Արիւն քամեց ծարաւի սուսերը,
Սուրը յաղթեցաւ, յետ դէմն պատերազմ,
Եկնում են հիմա սէգ Սիսուանն ի վերա։
Սէգ Սիսուանց կանաչ դէմն
Հայ քաջերն տնում են մեծ խնդում
Եւ ամպերի թանձրութեան միջին,
Հրեշտակ Սիսուանն ամբողջ թընդում.
«Էլ մեռ չեն գայ մեզ թշնամիք,
Սուր տեսան մեր պոզվատիկ»։

ՅԱՅՏԱԳԻՐ

ՄԱՍ Ա.

ՍՐԲԱԶԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

(Ըստ Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի հնաւանդ եղանակաց գրի առաւ եւ դաշնաւորեց Հայր Կոմիտաս վարդապետ)

1.— *Սուրբ, սուրբ* խմբերգ
վեցաձայն եւ քառաձայն

2.— *Տիրամայրն* Մենակերգ
Կոմիտաս վարդապետ

3.— ա) *Ո՛վ զարմանալի*
քառաձայն խմբերգ
Կոմիտաս վրդ. Մենակերգ

բ) *Այսօր ձայնն հայրական* խմբերգ
քառաձայն

4.— ա) *Ամենայն Հայր սուրբ* խմբերգ
վեցաձայն

բ) *Տէ՛ր, ողորմեա* խմբերգ
քառաձայն

5.— *Հաւիկ մի պայծառ տեսի* Մենակերգ
Կոմիտաս վարդապետ

6.— *Այսօր կանգնեցաւ*
քառաձայն խմբերգ
Կոմիտաս վրդ. Մենակերգ

7.— *Հայր մեր* խմբերգ
քառաձայն

ՄԱՍ Բ.

ԳԵՂՋՈՒԿ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

(Գրի առաւ եւ դաշնաւորեց Կոմիտաս վրդպ.)

1.— *Կայերդ եւ սայլերդ*
Կոմիտաս վրդ. Մենակերգ
մէկէն ութը ձայն խմբերգ

2.— *Մոկաց Միրզա* Մենակերգ
Կոմիտաս վարդապետ

3.— ա) *Սարը սարի նման չի* խմբերգ
քառաձայն

բ) *Սօնա նար* խմբերգ
վեցաձայն

4.— *Գիլեր, գոյլեր* Մենակերգ
Օր. Թ. Նանարեան

5.— ա) *Հինգ կծ ունիմ* խմբերգ
հնգաձայն

բ) *Ձա՛ր, զրնգր* խմբերգ
քառաձայն

6.— *Միրանի ծառ* Մենակերգ
Կոմիտաս վարդապետ

7.— ա) *Կուժն առայ, գնայ սարը* խմբերգ
քառաձայն

բ) *Սարեն գնաւ երկու մուռճ* խմբ.
վեցաձայն

գ) *Գնա՛, գնա՛, հեռին եմ* խմբերգ
վեցաձայն

ՄԱՍ Գ.

ԳԵՂՋՈՒԿ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

(Շարունակութիւն)

8.— ա) Գարշման կանկոչ խմբերգ
վեցաձայն
բ) Խուսար պատկի երգոքայ խմբ
վեցաձայն
9.— Կռունկ Մեծերգ
Կոմիտաս Վարդապետ
10.— Իմ չնարի երգ
Տիգ. Ս. Զէյթունցեան Մեծերգ
քառաձայն խմբերգ
11.— Կանչէ կռունկ Մեծերգ
Օր. Զ. Ռոսուճի
12.— ա) Էյկ՛ֆ տեսկ՛ֆ խմբերգ
քառաձայն
բ) Շորորա, Անոյշ խմբերգ
քառաձայն
գ) Հո՛վ, հո՛վ, հո՛վ լինի խմբերգ
հնգաձայն
13.— Գուրգանեարգ Մեծերգ
Կոմիտաս Վարդապետ
14.— Սիփանայ քաջեր խմբերգ
քառաձայն